

ԱՌԱՋԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՎԿ  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ  
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՍՈՎ


31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2025թ.

## **Բովանդակություն**

|  |    |
|--|----|
| Անկախ աուդիտորի եզրակացություն   | 3  |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն | 6  |
| Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն   | 7  |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն                         | 8  |
| Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն                                  | 9  |
| Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ                            | 10 |

23.06.2026  
N 012620

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ  
Գլխավոր տնօրեն  
Վ. Գևորգյան



## ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ  
խորհրդին

### Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ՈՒՎԿ ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

### Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր

**ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX**

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

***Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար***

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

***Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար***

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՄ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն,

**ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX**

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Ընկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Աուդիտոր  
Շ. Թաշչյան

23.06.2026թ.

**ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX**

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՍ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

|   | Ծանոթագրություն | (հազար դրամ)   |                |
|---|-----------------|----------------|----------------|
|   |                 | 2025թ.         | 2024թ.         |
| Տոկոսային և նմանատիպ եկամուտներ                 | 5               | 726,103        | 778,820        |
| Տոկոսային և նմանատիպ ծախսեր                     | 5               | (429,760)      | (425,394)      |
| <b>Զուտ տոկոսային եկամուտ</b>                   |                 | <b>296,343</b> | <b>353,426</b> |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ       |                 | 25,717         | 37,618         |
| Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր           |                 | (1,760)        | (11,101)       |
|   |                 | <b>23,957</b>  | <b>26,517</b>  |
| Արտարժույթային գործարքներից ստացված զուտ վնաս   |                 | 18,499         | 5,041          |
| Այլ գործառնական եկամուտ                         |                 | 7,812          | 7,156          |
| <b>Գործառնական եկամուտ</b>                      |                 | <b>346,611</b> | <b>392,140</b> |
| Վարկերից և այլ ակտիվներից արժեզրկման կորուստներ | 6               | 19,381         | (6,809)        |
| Անձնակազմի գծով ծախսեր                          | 7               | (137,380)      | (136,627)      |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր                   | 8               | (94,780)       | (99,121)       |
| <b>Շահույթ՝ մինչև հարկվելը</b>                  |                 | <b>133,832</b> | <b>149,583</b> |
| Շահութահարկի գծով ծախս                          | 9               | (22,213)       | (29,564)       |
| <b>Շահույթ՝ հարկումից հետո</b>                  |                 | <b>111,619</b> | <b>120,019</b> |

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2025թ. դեկտեմբեր 31-ի դրությամբ

|   | Ծանոթագրություն | (հազար դրամ)     |                  |
|---|-----------------|------------------|------------------|
|   |                 | 2025թ.           | 2024թ.           |
| <b>Ակտիվներ</b>                                 |                 |                  |                  |
| Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ           | 10              | 1,272,490        | 972,399          |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ                  | 11              | -                | 393,796          |
| Ներդրումներ                                     |                 | 3,680            | 3,680            |
| Հաճախորդներին տրված վարկեր                      | 12              | 5,793,440        | 6,874,831        |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ       | 13              | 253,950          | 274,300          |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ                | 14              | 10,787           | 13,483           |
| Դեբիտորական պարտքեր                             | 15              | 446,871          | 407,220          |
| Այլ ակտիվներ                                    | 16              | -                | 6,712            |
| <b>Ընդամենը՝ ակտիվներ</b>                       |                 | <b>7,781,218</b> | <b>8,946,421</b> |
| <b>Պարտավորություններ</b>                       |                 |                  |                  |
| Ֆինանսական կազմակերպություններից ստացված վարկեր | 17              | 4,853,624        | 5,991,073        |
| Թողարկված պարտքային արժեթղթեր                   | 18              | 1,061,410        | 1,088,672        |
| Վարձակալության գծով պարտավորություն             | 14              | 14,689           | 17,479           |
| Հետաձգված հարկային պարտավորություն              | 9               | 20,326           | 22,336           |
| Շահութահարկի գծով պարտավորություն               |                 | 5,634            | 8,534            |
| Այլ պարտավորություններ                          | 19              | 36,129           | 30,540           |
| <b>Ընդամենը՝ պարտավորություններ</b>             |                 | <b>5,991,812</b> | <b>7,158,634</b> |
| <b>Կապիտալ</b>                                  |                 |                  |                  |
| Կանոնադրական կապիտալ                            | 20              | 1,000,000        | 1,000,000        |
| Կուտակված շահույթ                               |                 | 789,406          | 787,787          |
| <b>Ընդամենը՝ կապիտալ</b>                        |                 | <b>1,789,406</b> | <b>1,787,787</b> |
| <b>Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ</b>   |                 | <b>7,781,218</b> | <b>8,946,421</b> |

Դավիթ Աթանեսյան  
Գործադիր տնօրեն

Գայանե Կորեկյան  
Գլխավոր հաշվապահ

23.06.2026թ.



ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

|  | Կանոնադրական<br>կապիտալ | Չբաշխված<br>շահույթ | Ընդամենը         |
|--|-------------------------|---------------------|------------------|
| <b>Մնացորդը 2024թ. հունվարի 1-ի դրությամբ</b>    | <b>1,000,000</b>        | <b>777,768</b>      | <b>1,777,768</b> |
| Համապարփակ եկամուտ                               | -                       | 120,019             | 120,019          |
| Շահաբաժնի վճարում                                | -                       | (110,000)           | (110,000)        |
| <b>Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b> | <b>1,000,000</b>        | <b>787,787</b>      | <b>1,787,787</b> |
| Համապարփակ եկամուտ                               | -                       | 111,619             | 111,619          |
| Շահաբաժնի վճարում                                | -                       | (110,000)           | (110,000)        |
| <b>Մնացորդը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b> | <b>1,000,000</b>        | <b>789,406</b>      | <b>1,789,406</b> |

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

|   | <i>(հազար դրամ)</i> |                  |
|---|---------------------|------------------|
|   | <b>2025թ.</b>       | <b>2024թ.</b>    |
| <b>Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>                        | <b>218,356</b>      | <b>276,778</b>   |
| Ստացված տոկոսներ  | 710,701             | 769,415          |
| Վճարված տոկոսներ  | (404,571)           | (411,714)        |
| Ստացված շահաբաժիններ  | -                   | 783              |
| Ստացված գույտ կոմիսիոն գումարներ  | 18,119              | 26,518           |
| Վճարված աշխատավարձ  | (105,893)           | (108,224)        |
| <b>Դրամական հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից</b>  | <b>(115,659)</b>    | <b>(409,948)</b> |
| Գործառնական ակտիվներում ավելացում   | (115,659)           | (409,948)        |
| <b>Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի վճարումը</b> | <b>(102,697)</b>    | <b>(133,170)</b> |
| Վճարված շահութահարկ   | (99,548)            | (87,078)         |
| <b>Ջուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից</b>                             | <b>202,245</b>      | <b>(220,248)</b> |
| <b>Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>                                 |                     |                  |
| Հիմնական միջոցներ   | (4,411)             | (2,474)          |
| <b>Ջուտ դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից</b>                            | <b>(4,411)</b>      | <b>(2,474)</b>   |
| <b>Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>                                   |                     |                  |
| Տեղաբաշխված միջոցների ավելացում   | 1,392,936           | (1,898,535)      |
| Վարկերի փոխառությունների ավելացում  | (568,073)           | 597,253          |
| Շահաբաժնի վճարում   | (56,978)            | (55,583)         |
| Պարտատոմսեր   | -                   | 1,077,160        |
| Այլ փոխառություններ   | (420,000)           | 433,105          |
| <b>Ջուտ դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից</b>                              | <b>347,885</b>      | <b>153,400</b>   |
| Դրամական միջոցների և դրանց համարժեքների գույտ աճ (նվազում)                            | 346,623             | (69,322)         |
| Արտարժույթի փոփոխություն  | (34,100)            | (19,819)         |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում                          | 972,399             | 1,061,540        |
| <b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում</b>                   | <b>1,284,922</b>    | <b>972,399</b>   |

## Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

### 1. Հիմնական գործունեություն

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) ստեղծվել է Հայաստանի Հանրապետությունում որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն 2004թ. ապրիլի 13-ին: Ընկերության հիմնական գործունեությունը հիփոթեքային վարկերի տրամադրումն է անհատներին Հայաստանի Հանրապետությունում: Վերջին տարիներին Ընկերությունը նաև զգալիորեն մեծացրել է բիզնես վարկերի պորտֆելը: Ընկերության գործունեությունը կարգավորվում է ՀՀ կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից: Ընկերությունն ունի վարկային կազմակերպության լիցենզիա:

Ընկերության բոլոր ակտիվները և պարտավորությունները գտնվում են Հայաստանի Հանրապետությունում: Ընկերության իրավաբանական հասցեն է ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փ. 10, գրասենյակ 122:

Կազմակերպության սեփականատերերի կազմը հետևյալն է՝ Նիշան Աթինիզյան (35%), Մարգարիտ Աթինիզյան (35%) և Դավիթ Աթանեսյան (30%):

Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սովյալներով կազմել է 12 մարդ (2024թ.՝ 11 մարդ):

### 2. Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող զարգացած երկրներում:

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն դրանք ենթակա են հաճախակի փոփոխությունների և կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Հետևաբար, Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին: Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Ընկերության գործունեության վրա կանխատեսելի ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության դեկլարացիայի գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկլարացիայի գնահատականից:

### 3. Պատրաստման հիմունքներ

#### *Համապատասխանության մասին հայտարարություն*

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների ("ՖՀՄՄ") պահանջների համաձայն:

#### *Չափման հիմունքները*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:

#### *Գործառնական և ներկայացման արժույթ*

Ընկերության գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

#### *Գործունեության անընդհատությունը*

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

### 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

#### **Եկամուտների և ծախսերի ճանաչում**

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտերը կհոսեն Ընկերություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից, և ծախսը հնարավոր է արժանահավատորեն չափել:

#### *Տոկոսային ծախսեր և եկամուտներ*

Մտացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Վարկային կազմակերպությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

**Միջնորդավճարներից և այլ նմանատիպ վճարներից եկամուտներ ու ծախսեր**

Միջնորդավճարները, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

**Փոխարժեքային տարբերությունների ճանաչում**

Արտարժույթային գործարքներից եկամուտները (վնասը) ներառում է արտարժույթով ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատումից եկամուտը (վնասը):

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթային հոդվածների վերահաշվարկից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ:

Ստորև ներկայացվում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Ընկերության կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքները.

|                     | 31 Դեկտեմբեր 2025թ. | 31 Դեկտեմբեր 2024թ. |
|---------------------|---------------------|---------------------|
| ՀՀ դրամ/ 1ԱՄՆ դոլար | 381.36              | 396.56              |

**Հարկային հաշվառում**

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն: Հետաձգված հարկերը հաշվի են առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված շահութահարկը առաջացել է գույքիլի կամ կազմակերպությունների միավորում չհանիդիսացող գործառնություններում ակտիվների կամ պարտավորությունների նախնական ճանաչման ժամանակ և ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույթով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում գործում են նաև բազմաթիվ այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են ելնելով Ընկերության գործունեությունից: Այս հարկերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են՝ այլ ծախսեր՝ հոդվածում: Անուղակի հարկերի գումարներն ներառվում են այն նյութական կամ ոչ նյութական արժեքի գումարի մեջ որին վերաբերվում են այդ հարկերը:

### **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են հաշիվները բանկերում: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում է ուղղակի մեթոդով:

### **Ֆինանսական գործիքներ**

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական առուվաճառքի դեպքում դրանք ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ: Սովորական ճանապարհով ձեռք բերված ֆինանսական գործիքները, որոնք հետագայում պետք է հաշվառվեն իրական արժեքով, գործարքի օրվա և պայմանագրի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն եղանակով, որով հաշվառվում են ձեռք բերված գործիքները:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները չափվում են իրական արժեքով՝ գումարած, ներդրումների դեպքում, գործարքին անմիջապես վերագրելի ծախսերը, բացառությամբ ֆինանսական արդյունքներում ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ներդրումները:

Սկզբնական ճանաչումից հետո, ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններին չվերաբերող բոլոր ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վաճառքի համար պահվողները) չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունները հետագայում հաշվառվում են իրական արժեքով:

2018 թվականի հունվարի 1-ից հետո Ընկերությունը իր ֆինանսական ակտիվները դասակարգում է հիմնվելով ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելի և ֆինանսական ակտիվի դրամական միջոցների հոսքերի պայմանագրային բնութագրի վրա, հետևյալ կերպ.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ
- Իրական արժեքով չափվող այլ համապարփակ եկամուտներով հաշվառվող ֆինանսական ակտիվներ
- Իրական արժեքով՝ շահույթ/վնասով չափվող ֆինանսական ակտիվներ;

### *Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ*

2018 թվականի հունվարի 1-ից հետո Ընկերությունը Հաճախորդներին տրված վարկերը, դեբիտորական պարտքերը, այլ ֆինանսական ակտիվները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարվում են հետևյալ 2 պայմանները.

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքման համար ակտիվներ պահելը.
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են: Նշված պայմանների մանրամասները ստորև.

***Բիզնես մոդելի գնահատում***

Ընկերությունը դասակարգում է ֆինանսական ակտիվները որպես հետագայում ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով չափվող՝ ֆինանսական ակտիվների կառավարման համար Ընկերության բիզնես մոդելի հիման վրա: Ընկերությունը գնահատում է, թե արդյոք իր ֆինանսական ակտիվները բավարարում են այդ պայմանին՝ հիմք ընդունելով բիզնես մոդելի նպատակը, ինչպես դա որոշվել է Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմի կողմից: Ընկերության բիզնես մոդելը կախված չէ առանձին գործիքի վերաբերյալ ղեկավարության մտադրություններից: Հետևաբար, այս պայմանը գործիք առ գործիք դասակարգման մոտեցում չէ և պետք է որոշվի խմբավորման ավելի բարձր մակարդակով:

***Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են***

Ընկերությունը դասակարգում է ֆինանսական ակտիվը որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, եթե այն բավարարում է միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսների վճարումների թեսթին:

Այդ թեսթի շրջանակներում <Մայր գումարը> սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք դրա սկզբնական ճանաչման պահին և կարող է փոփոխվել ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ընթացքում: Տոկոսների որոշման ամենակարևոր տարրը դա փողի ժամանակային արժեքի և վարկային ռիսկի հաշվի առնումն է: Մայր գումարի և տոկոսների վճարման թեսթը անցկացնելիս Ընկերությունը օգտագործում է իր դատողությունները և հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ֆինանսական գործիքի արժույթը և ժամանակահատվածը, որի համար տոկոսադրույքը սահմանվում է:

***Վարկեր և դեբիտորական պարտքեր***

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Վարկային կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Հետագայում վարկի հաշվեկշռային արժեքը որոշվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրամադրված վարկերը, որոնք չունեն մարման հաստատուն ժամկետներ, հաշվառվում են ակնկալվող մարման ժամկետի վրա հիմնված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկման կորուստների պահուստներով:

***Ֆինանսական ակտիվների արժեզրկում***

Հաշվեկշռային ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման աստիճանը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում են արժեզրկված և արժեզրկումից կորուստը ճանաչվում է ակտիվի ձևավորման պահին: Ընկերությունը մշտապես վերահսկում է արժեզրկման ենթակա բոլոր ակտիվները: Ընկերությունը դասակարգում է վարկերը հետևյալ երեք փուլերի մեջ՝

- առաջին փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց պարտքային որակը սկզբնական ճանաչումից հետո էապես չի նվազել, կամ որոնց նկատմամբ կիրառվել է ցածր վարկային ռիսկի հետ կապված պարզեցման մոտեցում
- երկրորդ փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց գծով սկզբնական ճանաչումից հետո արձանագրվել է պարտքային ռիսկի էական ավելացում, սակայն վարկային կորուստի վերաբերյալ օբյեկտիվ տվյալներ չկան

- Երրորդ փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց գծով առկա են արժեզրկման վերաբերյալ օբյեկտիվ վկայություններ:

Մպասվող պարտքային կորուստները (ՄՊԿ) դա պարտքային կորուստների միջին կշռված մեծությունն է, որը հաշվարկվում է դեֆոլտի (պարտքային կորուստների) հավանականության կշռման միջոցով: Ակտիվների պորտֆելային գնահատման ժամանակ յուրաքանչյուր ակտիվի գծով ՄՊԿ հաշվարկվում է որպես հետևյալ երեք բաղադրիչների արտադրյալ.

- ակնկալվող դրամական հոսքեր, բերված ներկա արժեքի սկզբնական կամ տվյալ պահին կիրառելի վերանայված արդյունավետ տոկոսադրույքով,
- հաջորդ 12 ամսվա կամ վարկի մնացած ժամկետի համար հաշվարկված դեֆոլտի հավանականություն
- դեֆոլտային վարկերի գծով կորուստների մեծություն:

Երրորդ փուլի այն վարկերը, որոնք պահուստի հաշվարկի օրվա դրությամբ, ինչպես նաև դրան նախորդող երեք ամսվա ընթացքում ունեն առավելագույնը 1-30 ժամկետանց օր, վերադասակարգվում են երկրորդ փուլ:

Երրորդ փուլի այն վարկերը, պահուստի հաշվարկի օրվա դրությամբ, ինչպես նաև դրան նախորդող երեք ամսվա ընթացքում ունեն 0 ժամկետանց օր, վերադասակարգվում են առաջին փուլ:

Երկրորդ փուլի այն վարկերը, պահուստի հաշվարկի օրվա դրությամբ, ինչպես նաև դրան նախորդող երեք ամսվա ընթացքում ունեն 0 ժամկետանց օր, վերադասակարգվում են առաջին փուլ:

Առաջին փուլում գտնվող վարկերի համար ճանաչվում է 12 ամսվա ՄՊԿ, իսկ երկրորդ և երրորդ փուլերի վարկերի համար՝ ամբողջ ժամկետի համար հաշվարկված ՄՊԿ:

### ***Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում***

#### ***Ֆինանսական ակտիվներ***

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- լրացել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը
- Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ համաձայն փոխանցման համաձայնագրի, և
- Ընկերությունը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը և չի փոխանցել ու չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը ճանաչվում է մինչև Ընկերության՝ ֆինանսական ակտիվում շարունակական մասնակցությունը: Փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև ստացած շարունակական մասնակցությունը որոշվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը կամ փոխհատուցման վճարվելիք գումարը, որ Ընկերությունից կարող է պահանջվել:

#### ***Ֆինանսական պարտավորություններ***

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է այն ժամանակ, երբ այն մարվում կամ չեղյալ է համարվում, կամ լրանում է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է էականորեն տարբերվող պայմաններով, բայց միննույն փոխառուին վերաբերող պարտավորությամբ, կամ էականորեն փոփոխվում են գոյություն ունեցող պարտավորության պայմանները, նման փոխանակումը կամ փոփոխությունը պետք է հանգեցնի սկզբնական պարտավորության ապաճանաչման և նոր պարտավորության ճանաչման, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

## Պաշարներ

Պաշարների հաշվապահական հաշվառումը կատարվում է համաձայն ՀՀՄՍ 2 ստանդարտի: Պաշարները հաշվառվում են ձեռք բերման արժեքով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարները ելքագրվում են "Առաջին Մուտք Առաջին Ելք" (ՖԻՖՈ) մեթոդով:

## Վարձակալություն

Ընկերությունը որպես վարձակալ

Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալական է, կամ պարունակում է վարձակալություն պայմանագրի գործողության սկզբում: Վարձակալության պայմանագիրն իրավունք է տալիս որոշակի ժամանակահատվածում սահմանելու որոշակիացված ակտիվի օգտագործման ուղղությունները և ստանալու որոշակիացված ակտիվից բոլոր տնտեսական օգուտները՝ փոխհատուցման դիմաց:

### *Վարձակալության ճանաչումը և չափումը որպես վարձակալ*

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Ընկերությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով, որը ձևավորվում է վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափումից, Ընկերության կատարած ցանկացած սկզբնական ուղղակի ծախսերից, վարձակալության ժամկետի ավարտին ակտիվի ապատեղակայման և քանդման ցանկացած ծախսի գնահատումից և նախքան վարձակալության մեկնարկի ամսաթիվը կատարված ցանկացած վարձակալական վճարներից:

Ընկերությունը հաշվարկում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը գծային հիմունքով վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից կամ վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը:

Մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ դրանք զեղչելով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը:

Սկզբնական չափումից հետո պարտավորությունը կնվազեցվի կատարված վճարումների և կմեծացվի տոկոսների չափով: Այն վերաչափվում է արտացոլելու ցանկացած վերագնահատում կամ փոփոխություն, կամ եթե առկա են փոփոխություններ ըստ էության հաստատուն վճարումներում:

Երբ վարձակալության գծով պարտավորությունը վերաչափվում է, համապատասխան ճշգրտումն արտացոլվում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվում կամ շահույթում և վնասում, եթե օգտագործման իրավունքի ձևով ակտիվը նվազեցվել է գրոյի:

Ընկերությունը կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար ընտրել է գործնական մոտեցումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն ճանաչելու փոխարեն,

դրանց հետ կապված վճարումները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են շահույթում կամ վնասում որպես ծախս՝ գծային հիմունքով:

**Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, հարկերը, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Վարկային կազմակերպությանը ետ վերադարձման:

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են

|                              |          |
|------------------------------|----------|
| Համակարգչային սարքավորումներ | 3 տարի   |
| Փոխադրամիջոցներ              | 10 տարի  |
| Տնտեսական և այլ գույք        | 1-8 տարի |
| Շենքեր                       | 30 տարի  |
| Ավտոտնակ                     | 13 տարի  |

Հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Այն ծախսումները, որոնք բարձրացնում են հիմնական միջոցի միավորի շահագործման արդյունավետությունը սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշների համեմատ, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին: Նշված ծախսումներն ամորտիզացվում են կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում, եթե դրանք չեն գերազանցում տվյալ տարվա (հիմնական միջոցի տվյալ միավորի արժեքին նշված ծախսումները ավելացնելու տարվա) հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցի մնացորդային արժեքը, հակառակ դեպքում ամորտիզացվում են օգտակար ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի դուրսգրումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

Հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում դրանք վերագնահատվում են: Վերագնահատման արդյունքները արտացոլվում են ՀՀՄՍ 16-ով սահմանված կարգով:

**Ոչ նյութական ակտիվներ**

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Ոչ նյութական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած

կուտակված ամորտիզացիան և ցանկացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հասկանիչները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

### **Փոխառություններ**

Փոխառությունները, որոնք ներառում են հաճախորդներից ներգրավված փոխառություններ, սկզբնապես ճանաչվում են ստացված գուտ մուտքերի իրական արժեքով՝ հանած անմիջապես վերագրելի գործառնական ծախսերը: Սկզբնական գնահատումից հետո փոխառություններն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ ապաճանաչվում են պարտավորությունները, ինչպես նաև ամորտիզացիոն ընթացակարգի միջոցով:

### **Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Ընկերությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

### **4. Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ**

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել:

Ընկերությունը վաղաժամկետ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը: Ղեկավարությունը կանխատեսում է, որ կիրառելի նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կընդունվեն Ընկերության կողմից դրանց ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող առաջիկա ժամանակաշրջանում:

Ղեկավարության կանխատեսմամբ՝ այս փոփոխությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև:

- Բացահայտումներ (ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ) - պահանջվում է բացահայտել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքով չափվող բաժնային գործիքների իրական արժեքով վերաչափումներից այլ համապարփակ եկամուտներ և ծախսերը՝ առանձնացնելով այն մասը որը վերաբերում է ընթացիկ ժամանակաշրջանում ապաճանաչված ակտիվներին:
- Բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ՖՀՄՍ 9-ի գործողության ոլորտում կարող են ներառվել բնական երևույթներից կախված և դրանց շնորհիվ արտադրված էլեկտրաէներգիայի (օրինակ հողմային էլեկտրակայանների կողմից արտադրված) ձեռքբերման կամ վաճառքի ածանցյալ պայմանագրերը, եթե ձեռքբերողը պարտավոր է հետ վաճառել էլեկտրաէներգիայի այն ծավալը, որը չի կարող օգտագործել:
- Առևտրային դեբիտորական պարտքերի չափումը (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - պարզաբանվում է որ առևտրային դեբիտորական պարտքերը ճանաչման պահին պետք է չափվեն այն արժեքով, որը որոշվել է կիրառելով ՖՀՄՍ 15 «Հասույթ գնորդների հետ պայմանագրերից»

հաշվապահական ստանդարտը:

- Վարձակալության գծով պարտավորությունների ապաճանաչում (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ֆինանսական պարտավորությունների ապաճանաչման պահին հաշվեկշռային արժեքի և վճարված հասուցման միջև տարբերությունը շահույթում կամ վնասում ճանաչելու պահանջը պետք է կիրառել նաև վարձակալության գծով պարտավորությունների նկատմամբ:
- Էլեկտրոնային վճարային համակարգով մարված ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - էլեկտրոնային վճարման համակարգի միջոցով ֆինանսական պարտավորությունների մարման դեպքում պարտավորությունը կարող է ապաճանաչվել վճարումը կատարելու պահին, եթե կազմակերպությունը չի կարող չեղարկել, կանգնեցնել կամ հետ կանչել վճարումը, օգտագործել այդ միջոցները և վճարման համակարգի հետ կապված ռիսկը աննշան է:
- Պայմանական հատկանիշով ֆինանսական ակտիվների - հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ (ՖՀՄՍ 9-ի փոփոխություններ) - ֆինանսական ակտիվի գծով բավարարված է հոսքերը որպես բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ համարվելու պայմանը, եթե ակտիվի հոսքերը պայմանական են (օրինակ կախված են արտանետված ջերմոցային գազերի ծավալից), պայմանագրային հոսքերը վերանայումից առաջ և հետո համապատասխանում են բազային վարկային համաձայնագրի բնութագրերին, ինչպես նաև հոսքերի վերանայումը կապակցված է բազային վարկային ռիսկին կամ վերանայված հոսքերը նշանակալիորեն չեն տարբերվում շուկայում համանման ֆինանսական ակտիվի հոսքերից:
- Վերահաշվարկումը գերադաճային տնտեսության արժույթով (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ) - եթե ներկայացման արժույթը գերադաճային տնտեսության արժույթ է, իսկ ֆունկցիոնալ արժույթը ոչ, ապա ֆինանսական հաշվետվությունները (արտերկրյա ստորաբաժանման արդյունքները և ֆինանսական վիճակը)՝ ներառյալ համադրելի ցուցանիշները, պետք է վերահաշվարկվեն ներկայացվող ամենավերջին հաշվետու ժամանակաշրջանի փակման փոխարժեքով:
- Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ),
- ՖՀՄՍ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում» - ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (նախկին շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը) պահանջվում է ներկայացնել եկամուտներն ու ծախսերը ըստ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, շահութահարկ և ընդհատված գործառնություններ բաժինների:
- ՖՀՄՍ 19 «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. Բացահայտումներ» - հնարավորություն է տրվում հանրային հաշվետվողականություն չունեցող կազմակերպություններին, որոնք նաև հանդիսանում են ՖՀՄՍ-ների համապատասխան հրապարակվող ֆինանսական հաշվետվություններ ներկայացնող կազմակերպության դուստր ընկերություն, ներկայացնել ավելի պակաս բացահայտումներ քան պահանջվում են այլ ՖՀՄՍ-ներով:

**5. Զուտ տոկոսային եկամուտ**

| <i>Տոկոսային եկամուտ</i>                 | <i>(հազար դրամ)</i> |                |
|--|---------------------|----------------|
|  | <b>2025թ.</b>       | <b>2024թ.</b>  |
| Հաճախորդներին տրված վարկեր               | 713,113             | 765,611        |
| Ժամկետային ավանդներ բանկերում            | 7,860               | 10,175         |
| Բանկային հաշիվներից տոկոսային եկամուտներ | 5,130               | 3,034          |
|  | <b>726,103</b>      | <b>778,820</b> |

*Տոկոսային ծախս*

|                                    |                |                |
|------------------------------------|----------------|----------------|
| Ներգրավված վարկեր, փոխառություններ | (319,462)      | (373,496)      |
| Վարձակալության գծով                | (1,667)        | (1,890)        |
| Ածանցյալ գործիքների գծով           | (16,045)       | -              |
| Պարտքային արժեթղթեր                | (92,586)       | (50,008)       |
|                                    | (429,760)      | (425,394)      |
| <b>Զուտ տոկոսային եկամուտ</b>      | <b>296,343</b> | <b>353,426</b> |

**6. Վարկերից և այլ ակտիվներից արժեզրկման կորուստներ**

|                                | <i>(հազար դրամ)</i> |                |
|--------------------------------|---------------------|----------------|
|                                | 2025թ.              | 2024թ.         |
| Վարկեր                         | 23,146              | 5,123          |
| Այլ ակտիվներ                   | (3,765)             | (7,922)        |
| Բանկերում տեղաբաշխված միջոցներ | -                   | (4,010)        |
|                                | <b>19,381</b>       | <b>(6,809)</b> |

**7. Անձնակազմի գծով ծախսեր**

|                  | <i>(հազար դրամ)</i> |                  |
|------------------|---------------------|------------------|
|                  | 2025թ.              | 2024թ.           |
| Աշխատավարձ       | (115,444)           | (109,381)        |
| Պարգևավճարներ    | (21,325)            | (26,699)         |
| Այլ հատուցումներ | (611)               | (547)            |
|                  | <b>(137,380)</b>    | <b>(136,627)</b> |

**8. Այլ ընդհանուր վարչական ծախսեր**

|                             | <i>(հազար դրամ)</i> |                 |
|-----------------------------|---------------------|-----------------|
|                             | 2025թ.              | 2024թ.          |
| Մաշվածություն, ամորտիզացիա  | (24,760)            | (25,390)        |
| Զփոխհատուցվող հարկեր        | (14,700)            | (12,209)        |
| Վարձակալություն, սպասարկում | (10,311)            | (10,721)        |
| Գովազդ, ներկայացուցչական    | (8,621)             | (10,589)        |
| Աուդիտ, խորհրդատվություն    | (8,707)             | (14,820)        |
| Գործուղում                  | (8,372)             | (5,602)         |
| Այլ ծախսեր                  | (19,309)            | (19,790)        |
|                             | <b>(94,780)</b>     | <b>(99,121)</b> |

**9. Շահութահարկի գծով ծախս**

|  | <i>(հազար դրամ)</i> |                 |
|--|---------------------|-----------------|
|  | 2025թ.              | 2024թ.          |
| <i>Հարկային ծախս</i>                   |                     |                 |
| <b>Ընթացիկ հարկային ծախսեր</b>         |                     |                 |
| Ընթացիկ ժամանակաշրջանի շահութահարկ     | (24,223)            | (26,553)        |
| Հետաձգված հարկային ծախս                | 2,010               | (3,011)         |
| <b>Ընդամենը շահութահարկի գծով ծախս</b> | <b>(22,213)</b>     | <b>(29,564)</b> |

| Հազար դրամ                        | 2024թ.<br>հունվարի 1 | Շահույթի կամ<br>վնասի և այլ<br>համապարփակ<br>ֆինանսական<br>արդյունքների<br>մասին հաշվե-<br>տվությունում<br>ճանաչված | 2024թ.<br>դեկտեմբերի<br>31 | Շահույթի կամ<br>վնասի և այլ<br>համապարփակ<br>ֆինանսական<br>արդյունքների<br>մասին հաշվե-<br>տվությունում<br>ճանաչված | 2025թ.<br>դեկտեմբերի<br>31 |
|-----------------------------------|----------------------|---|----------------------------|---|----------------------------|
| Հաճախորդներին տրված               | (18,933)             | (9,199)   | (28,132)                   | 3,513   | (24,619)                   |
| Վարկեր և փոխառություններ          | (5,473)              | 5,473   | -                          | -   | -                          |
| Օգտագործման իրավունքի<br>ակտիվ    | (2,911)              | 2,911   | -                          | -   | -                          |
| Արձակուրդի պահուստ                | 4,386                | 688   | 5,074                      | (781)   | 4,293                      |
| Լիզինգ                            | 3,608                | (3,606)   | -                          | -   | -                          |
| Բանկերում տեղաբաշխված<br>միջոցներ | -                    | 722   | 722                        | (722)   | -                          |
| Այլ                               | -                    | -   | -                          | -   | -                          |
|                                   | (19,323)             | (3,011)   | (22,336)                   | 2,010   | (20,326)                   |

10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

|                            | (հազար դրամ)     |                |
|----------------------------|------------------|----------------|
|                            | 2025թ.           | 2024թ.         |
| Ընթացիկ հաշիվներ բանկերում | 1,243,200        | 967,961        |
| Դրամարկղ                   | 41,722           | 4,438          |
| Պահուստ                    | (12,432)         | -              |
|                            | <b>1,272,490</b> | <b>972,399</b> |

11. Բանկերում տեղաբաշխված միջոցներ

|   | (հազար դրամ) |                |
|---|--------------|----------------|
|   | 2025թ.       | 2024թ.         |
| Բանկերում ներդրված ժամկետային ավանդներ                | -            | 397,806        |
| Վարկերի հնարավոր կորուստների պահուստ հիմնարկների գծով | -            | (4,010)        |
|   | -            | <b>393,796</b> |

12. Հաճախորդներին տրված վարկեր

|                                     | (հազար դրամ)     |                  |
|-------------------------------------|------------------|------------------|
|                                     | 2025թ.           | 2024թ.           |
| Հաճախորդներին տրված համախառն վարկեր | 5,805,392        | 6,910,367        |
| Վարկերի արժեզրկման պահուստ          | (11,952)         | (35,536)         |
|                                     | <b>5,793,440</b> | <b>6,874,831</b> |

Տրամադրված վարկերի վերլուծություն ըստ դասերի

|                    | (հազար դրամ)     |                  |
|--------------------|------------------|------------------|
|                    | 2025թ.           | 2024թ.           |
| Բիզնես վարկեր      | 299,792          | 287,789          |
| Հիփոթեքային վարկեր | 5,148,497        | 6,083,321        |
| Սպառողական վարկեր  | 345,151          | 503,721          |
